CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

(Իրավական իրազեկում)

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 2

1. Իրավական հիմքը.....2
2. Կարգավորման առարկան.....2
3. Նպատակը.....2
4. Լրավճարի չափը.....3
5. Շահառուն 5
6. Ընթացակարգը.....9
7. Դիմումների ներկայացման վերջնաժամկետը 11
8. Ներկայացված դիմումի չեղարկումը և կրկնակի դիմումի ներկայացման հնարավորությունը.....11
9. Ներկայացվող փաստաթղթերը.....13

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ա. Իրավական հիմքը

ՀՀ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի *«2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին»* **N 1756-Լ** որոշումը:

Բ. Կարգավորման առարկան

Սույն որոշմամբ կարգավորվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն բռնի տեղահանված ուսուցիչների հետագա մանկավարժական աշխատանքներում ներգրավման գործընթացը:

Գ. Նպատակը

Ծրագրի նպատակն է օժանդակել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին հավելյալ լրավճար սահմանել՝ Հայաստանի Հանրապետության մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական

ուսումնական հաստատություններում աշխատանքի անցնելու դեպքում։

Դ. Լրավճարի չափը

Ծրագրի շրջանակներում ուսուցչին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներից տվյալ հաստատության միջոցով լրացուցիչ հատկացվում է լրավճար՝ մանկավարժական **աշխատավարձի 30 տոկոսի չափով,** իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի հաստատությունների, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ ու Վարդենիս համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջևան ու Բերդ համայնքների հաստատությունների սույն ծրագրից օգտվող ուսուցիչներին՝ **ևս 50 000 (հիսուն հազար)** դրամ ֆիքսված լրավճար։

Ստացվում է, որ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի հաստատությունների, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ ու Վարդենիս համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջևան ու Բերդ համայնքների հաստատություններում ծրագրի շահառու ուսուցիչները կստանան և՛ լրավճար՝ մանկավարժական աշխատավարձի **30 տոկոսի չափով**, և՛ **50 000 (հիսուն հազար)** դրամ ֆիքսված լրավճար։

Ծրագրով սահմանված լրավճարները հաստատությունները ուսուցիչներին են փոխանցում ամսական պարբերականությամբ։

✓ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «12016. ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 սովորող ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին լրավճարի սահմանում» և «12015. Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկական առարկաների) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում» միջոցառումների շահառու հանդիսանալու դեպքում **այդ միջոցառումների ֆինանսավորման կարգերով սահմանված ժամկետային սահմանափակումները** այս ծրագրից օգտվող ուսուցիչների նկատմամբ կիրառելի չեն, և այդ **միջոցառումներով նախատեսված լրավճարները ենթակա են հաշվարկման հաստատությունների հետ պայմանագրեր կնքելու ամսվանից:**

Ե. Շահառուն

Ծրագրի շահառու է հանդիսանում այն ուսուցիչը, ով 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում բնակություն է

հաստատել Հայաստանի Հանրապետությունում, ունի «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք և հավակնում է աշխատել Հայաստանի Հանրապետության **մարզերի** բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում:

- ✓ Անհրաժեշտ է նկատել, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում բնակվող այն ուսուցիչները, ովքեր ցանկանում են **Երևան քաղաքի պետական հանրակրթական** ուսումնական հաստատություններում զբաղեցնել ուսուցչի պաշտոն, **չեն համարվում** սույն ծրագրի շահառու և հետևապես չեն կարող օգտվել այս ծրագրով սահմանված լրավճարներից:
- ✓ Հարկ է պարզաբանել նաև, որ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող պահանջներ ուղղակիորեն

առկա չեն, սակայն նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 26-րդ հոդվածի 1-ին կետի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ մանկավարժական աշխատողը ուսուցիչն է, իսկ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

- ✓ Մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Ընդ որում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն ՀՀ ԿԳՄՍ-ն չունի ԼՂՀ դատարանների կայացրած դատական ակտերի մասին տեղեկատվությունը, ուստիև **շահառուի վերաբերյալ հիմք է ընդունվում միայն դիմումի մեջ նշված հայտարարությունը:**

4)տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը, դրանք են՝

1. Օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ (F00 - F09)

2. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ (F20 - F29)

3. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ (F30 - F39)

4. Սովորույթի և հակումների խանգարումներ (F63)

5. Մտավոր հետամնացություն (F70 - F79)

6. Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով (F10- F19)

7. Շնչառական օրգանների տուբերկուլյոզ՝ հաստատված մանրէաբանորեն կամ հյուսվածքաբանորեն (A15)

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՄԱՆԱԼ

ԼՂ բռնի տեղահանված անձի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալը ծրագրի իրականացման (աջակցության դադարեցման) խոչընդոտ չէ:

Զ. Ընթացակարգը

Հայաստանի Հանրապետության մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություններ) որևէ առարկայից ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում, սահմանված կարգով ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին դիմող չլինելու կամ մրցույթը չկայանալու պարագայում, նախարարությունը Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով (այսուհետ՝ ԿԿՏՀ) 2023 թվականի հոկտեմբերի 16-ից տվյալ առարկայի գծով շահառուներին ապահովում է տվյալ առարկայի գծով ուսուցչի թափուր տեղերի մասին տեղեկատվության հասանելիությունը, որը

պարունակում է տեղեկատվություն հաստատության անվանման, տեղակայման վայրի, դասավանդվող ժամերի քանակի, դրույքաչափի մեծության մասին:

Նշված թափուր տեղերից շահառուն ընտրում է մեկը՝ նշում կատարելով ԿԿՏՀ-ի համապատասխան դաշտերում, որոնց հիման վրա ինքնաշխատ եղանակով ձևավորվում է տվյալ թափուր տեղի համար դիմումը: Դիմումատուն իր ցանկությամբ կարող է ներբեռնել նաև փաստաթղթերի լուսապատճեններ՝ դրանց առկայության դեպքում:

Աջակցության ծրագրի շահառուն կարող է դիմել սահմանված ընթացակարգով և թափուր տեղը համալրել **արտամրցութային** հիմունքներով:

Դիմումատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու նպատակով նախարարությունը համապատասխան ուղեգրով դիմում է տվյալ հաստատությանը: Ընդ որում, **պայմանագրի ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման պահից մինչև 2-րդ ուսումնական տարվա ավարտը**, իսկ սույն ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում տվյալ ուսուցիչը զրկվում է սույն ծրագրից կրկին օգտվելու իրավունքից (բացառությամբ բնակության վայրի փոփոխությամբ պայմանավորված դեպքերի):

✓ Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ գրանցվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության հարթակում (https://kadrer.emis.am) և ուղարկել հայտ:

Գրանցման և հայտ ուղարկելու քայլ առ քայլ ուղեցույցը հրապարակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից, որը կարող եք տեսնել հետևյալ հղմամբ՝ https://escs.am/am/news/18643

Է. Դիմումների ներկայացման վերջնաժամկետը

Ծրագրի շրջանակներում դիմումների ներկայացման վերջնաժամկետն է **2024 թվականի դեկտեմբերի 31-ը:**

Ը. Ներկայացված դիմումի չեղարկումը և կրկնակի դիմումի ներկայացման հնարավորությունը

Դիմումատուն կարող է դիմելուց հետո 10-օրյա ժամկետում չեղարկել իր դիմումը տվյալ թափուր տեղի համար:

Դիմումի չեղարկման պարագայում շահառուն կարող է կրկին դիմում ներկայացնել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում հասանելի այլ թափուր տեղերից մեկի համար, իր ընտրությամբ, նույն ընթացակարգով:

Երկրորդ անգամ ներկայացված դիմումի չեղարկման պարագայում շահառուն կորցնում է ծրագրից առաջնահերթության իրավունքով օգտվելու հնարավորությունը և ուսուցչական թափուր տեղի համալրման գործընթացին կարող է մասնակցել օրենսդրությամբ սահմանված կարգով[1]:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԸՆԴԳԾԵԼ, որ

Կենտրոնի հարցմանն ի պատասխան ԿԳՄՍ նախարարությունից ստացվել է գրություն, ըստ որի 2023 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 15-ը 71 ուսուցչի հետ կնքված պայմանագրեր վաղաժամկետ

---

1 https://www.arlis.am/documentview.aspx?docid=194172 ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հունիսի 21-ի N 396-ն հրամանը՝ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի n 1262-ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին:

դադարեցվել են **շահառուների նախաձեռնությամբ՝ բնակավայրը փոխելու կամ այլ պատճառով:**

Բնակության վայրի փոփոխությամբ պայմանավորված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում, սակայն, ուսուցիչը հնարավորություն ունի օգտվել կրկին օգտվել ծրագրի արտոնյալ պայմաններից:

Թ. Ներկայացվող փաստաթղթերը

- Բարձրագույն կրթության դիպլոմի բնօրինակի տեսաներածված (scan) տարբերակը,
- Անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի տեսաներածված (scan) տարբերակը,
- Ինքնակենսագրություն,
- Բնութագիր նախկին աշխատավայրից (առկայության դեպքում),
- Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող այլ փաստաթղթեր (դիմումատուի ցանկությամբ):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԻ

2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագրով **որևէ սահմանափակում չկա մարզերի դպրոցներ գործուղված մանկավարժներին հատկացվող դրամական օժանդակությունից օգտվելու մասին:**

Ուստին սույն ծրագրի շահառուն կարող է միևնույն ժամանակ օգտվել նաև ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցներ գործուղված մանկավարժներին հատկացվող դրամական օժանդակությունից:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստել է քայլ առ քայլ ուղեցույց, թե ինչպես ԼՂ բռնի տեղահանված ուսուցիչները պետք է ՀՀ մարզեր ուսուցիչների գործուղման համակարգում գրանցվեն և հայտ ներկայացնեն:

Այդ ուղեցույցը կարող եք ներբեռնել հետևյալ հղումով՝

https://escs.am/files/files/2023-10-27/f8ed7d1373ddcc718b61e39b5acbc51b.docx